

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ԾՆՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի ՀԵՌԱԳՐԵՐԸ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՈՒՆՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ ԵՎ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ

Փրկչի հրաշափառ Հարության տոնի առթիվ ընդունեցեք Մեր շնորհավորանքները և հաղորդեցեք Մեր բարեմաղթությունները Ձեր հոտին:

Քրիստոսավանդ սիրով և օրհնությամբ՝

ԳԵՈՐԳ Զ.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԵՏԵՐԻՆ

Քրիստոնյա աշխարհը այսօր տոնում է Հիսուսի Հարության ավետիքը, որ հնչեց հին աշխարհում և նոր շարժման ու նոր կյանքի սկիզբը դրավ: Հիսուսի Հարության ավետիքով վերակենդանացած աշակերտները՝ արիասիրտ ու համարձակ դարձան և՝ իրենց կրակոտ քարոզով՝ բարոյապես փտած աշխարհին բարոյական իդեալներ տվին ու վերակենդանացրին: Նոր աշխարհն էլ կարոտում է բարոյական վերածնության: Աղոթենք, որ Փրկչի Հարության հավատը զորանա համայն հոգևորականության սրտերում, որպեսզի նա ևս արիասիրտ ու համարձակ դառնա և իր կրակոտ քարոզներով վերակենդանացնե նոր աշխարհը: Աղոթենք նաև, որ Փրկիչը հարություն առնե և ապրի համայն մարդկության սրտերում՝ խաղաղություն և երջանկություն բերելով իր հետ:

Խորին հարգանք և քրիստոսավանդ եղբայրական սիրո համբուրիվ՝

ԳԵՈՐԳ Զ.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԹԵՄԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ ԵՎ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԵՅՐՈՒԹԻՑ

Կիլիկիո ժողովրդի և միաբանության անունից հայտնում ենք Ձերդ Վեհափառության մեր լավագույն ցանկությունները Փրկչի Հարության տոնի առթիվ·

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ՝

ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀՅԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻՑ

Զատկական տոնի առթիվ ընդունեցեք թրքահայ Ձեր բոլոր զավակաց, պաշտոնական մարմնոց և մեր շնորհավորությունքը, բարեմաղթանքն ու որդիական հարգանքը:

ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐՔ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻՑ

Սրբոց Հակոբյանց միաբանության անունից մատուցում ենք Զատկվա տոնի շնորհավորություններ, ցանկանալով Ձերդ Վեհափառության երջանիկ և երկար կյանք, Հայրենիքին և Եկեղեցուն՝ բարգավաճում և արևշատություն:

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ՝

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻՑ

Շնորհավորում ենք Ձերդ Վեհափառության Զատկական տոնը և մաղթում ենք Ձեզ երկար կյանք:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԴԱՍ,
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴ

ԹԲԻԼԻՍԻԻՑ

Վրաստանի հայոց թեմական խորհուրդը, հոգևորականությունը և հավատացյալները ողջունում են Ձերդ Վեհափառությանը Քրիստոսի Հարության Զատկվա տոնի առթիվ:

Ցանկանում ենք Ձերդ Վեհափառությանը առողջ և երկար կյանք:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՌՈՍՏՈՎԻՑ

Ռոստովի հայոց թեմական և եկեղեցական խորհուրդը, հոգևոր հովիվները ու թեմի հավատացյալները շնորհավորում են Ձերդ Վեհափառությանը, Ս. Էջմիածնի վանքի միաբաններին ու հավատացյալներին՝ Զատկվա տոնի առթիվ:

Հյուսիսային Կովկասի թեմի առաջնորդ՝
ՍՈՒՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԿԱՀԻՐԵԻՑ

Խնդրում ենք Ձերդ Վեհափառությանը՝ հաճեցեք ընդունել մեր ջերմագին մաղթանքները տոնի առթիվ: Թող ամենամեծ Արարիչը խաղաղություն պարգևե, Մայր Աթոռին՝ բարգավաճում, անսասանություն, և երկար կյանք՝ Ձերդ Վեհափառության:

Եգիպտահայ թեմի առաջնորդ՝
ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՐՈՒՆՅԱՆ

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍԻՑ

Աստվածորդվույն հրաշափառ Ս. Հարության տոնին առթիվ, կուգանք Ձերդ Սրբության մատուցանելու մեր ու Հարավային Ամերիկայի մեր սիրեցյալ ժողովուրդին որդիական հարգանքները և սրտագին մաղթանքները: Կաղոթենք, որ ամենաբարին Աստված Ձերդ Վեհափառության պարգևե երկար և առողջ կյանք, հովվելու համար Հայաստանյայց Ս. Եկեղեցին ու հայ ժողովուրդը:

Շնորհավորելով Ս. Զատիկը, կմաղթենք Ձերդ Սրբության և Մայր Աթոռ միաբանության ուժ և կարողություն:

Մատչելով ի համբույր Վեհափառությանդ Ս. Աջույն, մնամք հարգալից սիրով հոգևոր որդի Ձեր՝

Հայրապետական պատվիրակ Հարավային Ամերիկահայոց՝
ՍԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՆՅՈՒ-ՅՈՐՔԻՑ

Տյառն մեր Հիսուսի Քրիստոսի Հարության հրաշափառ տոնի առթիվ հայտնում ենք մեր թեմի բոլոր հոգևորականների և հավատացյալների բարեմաղթությունները՝ Ձերդ Վեհափառության առողջության և Հայաստանյայց եկեղեցվո բարգավաճման համար:

Հյուսիսային Ամերիկայի հայոց առաջնորդ՝
ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԱՆ

ՓԱՐԻԶԻՑ

Զատկվա տոնի առթիվ սրտագին շնորհավորում ենք և ցանկանում ենք Ձերդ Վեհափառության կատարյալ առողջություն, երկար կյանք, և Հայոց եկեղեցուն՝ բարգավաճում Ձերդ իմաստուն հովանավորության ներքո:

Եվրոպայի հայոց թեմի Հայրապետական պատվիրակ՝
ՍԵՐՈՎԲԵ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ,
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

Ռումինահայ հավատացյալ ժողովրդի և թեմական խորհրդի անունից շնորհավորում ենք Քրիստոսի Հարությունը, մաղթելով Ձերդ Վեհափառության առեշատություն, երշանիկ հովվապետություն, վերածնված Սովետական Մայր Հայրենիքի կենսաշող արևի տակ:

Ռումինահայ թեմի առաջնորդ՝
ՎԱՉԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼՃՅԱՆ

ԼԵՆԻՆԱԿԱՆԻՑ

Շիրակի թեմական խորհուրդը, հոգևորականությունը և անձամբ ես շնորհավորում ենք Ձերդ Վեհափառությանը՝ Քրիստոսի Հարության Զատկվա տոնի առթիվ և Ձեզ երկար կյանք ցանկանում՝ ի բարություն հայ ժողովրդի և Հայոց եկեղեցու:

Համբուրում ենք Ձեր Աջը:

Շիրակի թեմի առաջնորդ՝
ԳԱՐԵԳԻՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ

ԱԹԵՆՔԻՑ

Հրաշափառ Ս. Հարության տոնի առթիվ խոնարհաբար մատուցում ենք Ձերդ Վեհափառության և Գերագույն Հոգևոր Խորհրդին՝ գաղութիս հոգևորական դասի, ազգային իշխանությանց և համայն ժողովրդի սրտագին շնորհավորությունները:

ՀԱՅՐ ՆԵՐՍԵՍ ԽՈՇՈՐՅԱՆ

ԲԱՔՎԻՑ

Բաքվի հայոց եկեղեցական խորհուրդը, հոգևորականությունը և հավատացյալները շնորհավորում են Ձերդ Վեհափառությանը՝ Զատկվա տոնի առթիվ և Ձեզ երկար կյանք ցանկանում՝ ի բարություն հայ ժողովրդի:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԹԱՎՐԻԶԻՑ

Թեմական ժողովը, թեմական խորհուրդը, բանանայից դասը, համայն Ատրպատականը ամենախորունկ հարգանքով համբուրելով Ձեր Սուրբ Աջը, շնորհավորում են Փրկչի հրաշափառ Հարության հաղթական տոնը:

ԿԱՐԱՊԵՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ

ԹԵՀՐԱՆԻՑ

Սրտագին շնորհավորում ենք Նորին Վեհափառությանդ Ս. Հարության տոնը:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ,
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՔԱՀԱՆԱՅՔ

ԿԱԼԿԱԹԱՅԻՑ

Խորին շնորհակալություն ենք հայտնում Ձերդ Ս. Օծության շնորհավորանքների համար: Փրկչի Ս. Հարության տոնի առթիվ փոխադարձաբար շնորհավորում ենք Սրբությանդ և համայն միաբանության՝ մաղթելով արևշատություն և երջանկություն:

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԲԱՂԴԱԴԻՑ

Ամբողջ համայնքի և հոգևորականության հետ միասին սրտագին շնորհավորում ենք գալիք Ս. Զատիկը: Ցանկանում ենք երկար կյանք և երջանկություն:

Առաջնորդական տեղապահ՝
ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԻԼԱՆԻՑ

Շնորհավորում ենք Ձերդ Սրբության Ս. Զատիկը:

Խոնարհաբար՝
ՋԳՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ԿԻՐԻՎԱԿԱՆԻՑ

Այսու գալիս եմ համբուրելու Ձեր Ս. Աջը և ասելու՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց, Ձեզ և մեզ մեծ ուտիք»: Ցանկանում եմ վեհիդ առողջ և երկար կյանք՝ ի բարօրություն հայ ազգին:

Ձեր ծառա՝
Տ. ԳԵՈՐԳ ՔԱՀԱՆԱ ԳԵՈՐԳՅԱՆ

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Ձերդ Վեհափառությո՛ւն.

Ընդունեցեք մեր ուղիղական զգացմունքները ու սրտաբուխ շնորհավորանքները՝ լուսապսակ Քրիստոսի Հարության վեհահանդես տոնի առթիվ:

Տայցե Ամենաբարձրյալը Ձեզ երկար կյանք՝ ի փառս եկեղեցու և Հայրենիքի:

Մոսկվայի Հոգևոր ճեմարանի ուսանող սարկավագներ՝
ՔԱՋԻԿ, ԱՆԴՐԱՆԻԿ, ՀԵՆՐԻԿ

ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ ԵՎ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի փրկչական Հարության Զատկվա տոնի առթիվ, ընդհանրական քրիստոնեական բերկրանքի այս օրերին, խաղաղության և սիրո փոխադարձ հաղորդակցմամբ ողջունում եմ Ձեզ նույն բերկրանքով:

Աղոթենք կյանքի հարություն առած Պետին. թո՛ղ Նա մեզ տոգորի լուսով և ուժով՝ Իր անսպառ կյանքի աղբյուրից, և թո՛ղ չդադարի Նրա բերկրանքը մեր հոգին լուսավորելուց, Իր կյանքով մեր կյանքը նորոգելուց՝ Նրա Ս. Եկեղեցուն ստվածահաճո և փրկարար կերպով ծառայելու համար:

Այս զգացումներով համակված, առ Ձեզ եմ վերառաքում փոխադարձ համբույրներս և երկնային օգնության անկեղծ ցանկություններս՝ Ձեր նվիրական ջանքերի և մեծագործությունների համար:

Արդարև հարյավ Քրիստոս:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈՅ ՊԱՏՐԻԱՐՔ՝

ԱԼԵՔՍԻ

ԹԲԻԼԻՍԻՑ

Քրիստոսի Հարությունը լուսավորեց և՛ երկինքը, և՛ երկիրը, և՛ դժոխքը:

Շնորհավորում եմ Ձեզդ Վերափառությանը՝ այս բերկրալի տոնի առթիվ և աղոթում հարություն առած Տիրոջը. թո՛ղ Նա խաղաղություն ու բերկրանքով լի ուրախ և հաճելի կյանք հաստատի երկրի վրա:

Առ Հիսուս Քրիստոս տածած սիրով, Ձեր եղբայրակից՝

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ՝

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ

ԼՈՆԴՈՆԻՑ

Ձե՛ռդ Սրբություն, սիրեցեա՛լ եղբայր ի Քրիստոս.

«Զատիկ մեր զենաւ Քրիստոս: Այսուհետև արասցուք տօնս՝ մի՛ ի խմորն հին և մի՛ ի խմորն չարութեան և անզգամութեան, այլ յանխմոր ստուգութեան և ճշմարտութեան» (Ա. Կորնթ., ե 7—8):

Այս բառերով երանյալ Առաքյալն Պողոս ի՞նչ հարատարեն ցույց է տալիս զատկական պատգամի հաղթանակը և ուժը, և մեզ հիշեցնում այն ոգին, որով մենք տոնախմբում ենք այն: Այսպես Ս. Եկեղեցին, տասնիներդ դարերի ընդմիջից, ամեն Զատկի վերադառնում է իր ներշնչման և ուժի աղբյուրին, իր օրհնյալ Տիրոջ, Փրկչի և Աստծու՝ Հիսուսի հարուցյալ կյանքին:

Սիրեցյեա՛լ եղբայր ի Տերն հարուցյալ. այս օրհնյալ օրում շնորհավորում եմ Ձեզ ամենախորունկ և ամենաանկեղծ սիրով: Մենք ուրախանում ենք

որպես մի՝ Ձեր համայն ժողովրդի հետ, իբր եղբայր միացած ի Քրիստոս Փրկիչ, որն ամենայնն է համենայնի: Ձեզ հետ, լինելով «յարուցեալք ընդ Քրիստոսի, ապա զվերինն խնդրեսցուք, ուր Քրիստոսն նստի ընդ աջմէ Աստուծոյ» (Կողոս., Գ 1): Այս հարությունը, որ Քրիստոսը շնորհել է մեզ, բարձր է պահում մեզ վաղանցուկ այս աշխարհի դժբախտություններից և ճնշումներից վեր, նույնիսկ այդ չարիքների հետ մեր պայքարների միջոցին, և թույլ է տալիս մեզ միասին ընդհնշմարել այն հավիտենական հաղթանակը, որը մերն է Աստծու իշխանությամբ և նրա շնորհիվ:

Թո՛ղ Աստված առաջնորդի Ձեզ և Ձեր եկեղեցուն՝ ներկայումս թափուր Հովվապետական Աթոռները լցնելու դժվարին և պատասխանատու աշխատանքում: Հայոց եկեղեցու հետ սերտ կապերը շատ են գնահատվել ինձանից, և ես մեծապես կողջունեմ որևէ առաջարկ՝ բարելավելու և զորացնելու համար մեր հարաբերությունները:

Այնպիսի մի աշխարհում, որտեղ բազում «չարիք և անզգամություն» առկա են, հիմնելու համար «ստուգության և ճշմարտության» մեր խոսքերը, դավանելով մեր միությունն ի Քրիստոս, հնչում է մեր ձայնը որպես շեփորի մի կոչ բոլոր այն բաների միջից, ինչ բաժանում է մարդկային ընտանիքը: Թո՛ղ Քրիստոսի պատգամը բժշկություն բերի ազգերին և միություն՝ Աստծու եկեղեցուն: Թո՛ղ Աստված օրհնի Ձերդ Սրբությանը և համայն Ձեր հավատացյալ ժողովրդին՝ հեղլով ձեր վրա իր շնորհաց առատությունը:

Մնամ Ձեր անկեղծ և սիրող եղբայր ի Քրիստոս,

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՆՏԲԵՐԻ,
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ
ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈՅ՝

ՋԵՈՖՖՐԻ

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Ի՜նչպիսի նվիրական հրճվանք է մեզ բերում Քրիստոսի Հարության Զատիկը:

«Զի հիրավի սուրբ և համատոնական է սույն փրկարար և հանանչափայլ գիշերը՝ արարվածի զարթոնքի լուսաբեր օրվա նախագուշակը» (Զատկական կանոնի 7-րդ երգը):

Եվ իսկապես, այլ ե՛րբ պետք է մենք տոն կատարենք, եթե ոչ ա՛յս նվիրական օրերին, որոնք մեզ հիշեցնում են թե՝ «Որ յարոյցն զՅիսուս՝ և զմեզ ընդ Յիսուսի յարուցէ և յանդիման կացուցէ ձեզ հանդերձ» (Բ Կորնթ., Դ 14):

Ողջունելով Ձերդ Վեհափառությանը լուսապայծառ Քրիստոսի Հարության վեհաշուք Զատկվա տոնի առթիվ և Ձեր առջև երիցս խոնարհելով, արտաքին անձնվիրության և առ Տերը տածած որդիական սիրո զգացումներս եմ առաքում Ձերդ Սրբությանը:

Արդարև հարյավ Քրիստոս:

Ձերդ Վեհափառության անձնվեր որդի՝

ԿՐՈՒՏԻՑԿՈՒ ԵՎ ԿՈԼՈՄԵՆԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ՝

ՆԻԿՈԼԱՑ

ՏԱԼԼԻՆԻՑ

Էստոնական ՍՍՌ Ավետարանական-Լութերական Եկեղեցու անունից ողջունում ենք Ձեզ և ի դեմս Ձեր Հայոց Եկեղեցուն՝ ընթացիկ մեծ տոնի՝ Քրիստոսի լուսապայծառ Հարության կապակցությամբ: Ի սրտե շնորհակալություն ենք հայտնում Ձեր ողջույնի առթիվ՝ Ս. Ջատկի առնչությամբ: Աղոթքներով բարեմաղթում ենք Ձերդ Վեհափառության արևշատություն և երկար կյանք:

Էստոնական ՍՍՌ Ավետարանական-Լութերական
Եկեղեցու արքեպիսկոպոս՝
ՅԱՆ-ԿԻՅՎԻՏ

ՍՈՖԻԱՅԻՑ

Քրիստոսի վեհապանծ Հարության գորովանքով տոգորված, մեր հանելի եղբայրական պարտքն ենք զգում ողջունելու Ձեզ ամենամեծագույն հանդիսի առթիվ:

Քրիստոս հարյա՜վ: Ցկա՛ հավատացյալ հոգու համար առավել բերկրալի ավետիք, քան հաղթական այս ողջույնը, քանզի Քրիստոսի Հարությունը լուսաշինչ հավատով, հաստատ հույսով ու վեհ սիրով է համակում յուրաքանչյուր քրիստոնյա սիրտ:

Քրիստոս հարյավ ու հաղթեց մարդկային փրկության թշնամուն:

Քրիստոս հարյավ ու կատարեց քավության ամենավսեմ գործը, որ իր սիրով տոգորեց նույնիսկ ամենաչարաբարո մեղավորներին, որոնք Աստծուն ապավինեցին:

Քրիստոս հարյավ, և հավատացյալներին կյանքի իմաստությամբ ու փրկությամբ ոգեշնչող աստվածաշունչ Ավետարանի արդարությունը հաղթանակեց:

Քարոզելով խաչելության շարչարանքները, մենք նաև ազդարարում ենք հարության՝ հոգու այդ մեծ մխիթարանքի նշմարտությունը:

«Այս է զոր արար Տէր, եկայք ցնծասցուք և ուրախ եղիցուք ի սմա: Ո՛ Տէր, փրկեա, ո՛ Տէր, առաջնորդեա» (Սաղմ. ՃԺԷ 14):

«Այլ շնորհք Աստուծոյ, որ ետ մեզ զյաղթութիւն ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (Ա Կորնթ., ԺԵ 57):

Հրճվելով, որ Աստված այս տարի ևս շնորհեց մեզ բերկրալի երկրում ամենահանդիսավոր տոնակատարությամբ, մենք՝ Բուլղարական Ուղղափառ Եկեղեցու Սուրբ Սինոդի և իմ անունից շնորհավորում ենք Ձեզ՝ Ձերդ Երանելությանը, Ձեր Հովվապետության գերապատիվ միաբաններին, Ձեր աստվածասեր կղերին և աստվածապաշտ հոտին լուսապսակ Քրիստոսի Հարության առթիվ, ցանկանալով Ձեզ խաղաղություն և բերկրանք Հարուցյալ Կենսատուի վերաբերմամբ:

Ողջագուրում ենք Ձեզ՝ եղբայրական սիրով ի Տէր և մնում ենք Ձերդ Երանելությանը Քրիստոսով անձնվեր, եղբայր ու պաշտոնակից,

ՍՈՒՐԲ ՍԻՆՈԴԻ ՓՈԽ ՆԱԽԱԳԱՀ՝
ԿԻՐԻԱ ՊԼՈՎԴԻՎՍԿԻՑ

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

Սրտի անհուն բերկրանքով և քրիստոսավանդ սիրով ողջունում ենք Ձերդ Սրբության՝ Փրկչի Հարության տոնի առթիվ և բարեմաղթում Ձեզ արևշատություն:

Ռումինիայի Պատրիարք՝
ՀՈՒՍՏԻՆԻԱՆ

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Մոսկվայի հոգևոր ճեմարանի վարչությունը և մի խումբ ավագ սարկավագներ հղում են Ձերդ Վեհափառությանը սրտաբուխ ողջույններ՝ Քրիստոսի Հարության լուսաշող Զատկվա տոնի առթիվ և Ձեզ երկար կյանք ու ամենայն բարի ցանկանում·

Ճեմարանի ռեկտոր, ավագերեց՝
ՌՈՒԺԻՑԿԻ

Ճեմարանի տեսուչ, պրոֆեսոր՝
ԴՈԿՏՈՒՍՈՎ